2023, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (628)

Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը:

Հուշահամալիրում՝ անմար կրակի առջեւ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Օրվա առիթով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր էր բերվել նաեւ Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Հարյուր եւ ավելի տարիներ առաջ մեկ եւ կես միլիոն հայորդիք իրենց կյանքի գնով վկայեցին հավատարմությունը աստվածաշնորհ մեր հայրենիքին ու հավատքին՝ մերժելով ուրացությունն ու ուծացումը: Նրանք կենդանի պահեցին իրենց հավատն ու հույսը մեր ժողովրդի վերածննդի հանդեպ: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը խորհրդանշում է այդ վերածնունդը, որն իրականություն դարձավ հայրենիքի մի փոքր հատվածում անկախ պետականության վերակերտումով, ինչպես եւ աշխարհի տարբեր երկրներում ցեղասպանությունից փրկված հայորդյաց նոր կյանքի վերընձյուղումով:

Այսօր Հայաստանում ու Արցախում եւ ի սփյուռս աշխարհի, ազգովի համախմբված եկեղեցիներում, հուշակոթողների առջեւ, աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ խնդրելով Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսությունը, որպեսզի միաբան ու աննկուն կամքով կարողանանք դիմագրավել արհավիրքներին ու սպառնալիքներին, պայքարել հայոց արդար դատի հաղթանակի համար եւ նպաստել մեր ժողովրդի կյանքում ու աշխարհում ցեղասպան եղեռնագործությունների ու ոճիրների կանխմանը:

Թող երկնավոր Տերը խաղաղություն ու բարօրություն պարգեւի Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին, եւ թող հարուցյալ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի երկնային շնորհները եւ սերը բաշխվեն համայն մեր ժողովրդին ու ողջ մարդկությանն այսօր եւ միշտ. ամեն:

Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ոգեկոչման արարողությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, սուրբ պատարագի արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Այդ կապակցությամբ հավատացյալների խոնարհումի համար դուրս էր բերվել նաեւ Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը:

Իր քարոզում հայր սուրբը, անդրադարձ կատարելով Ի դարասկզբի պատմական իրադարձություններին եւ Հայոց ցեղասպանությանը, ի մասնավորի նշեց. *«Հարյուր ութ տարի շարունակ մեր ազգային հիշողության մեջ ցեղասպանության փաստը մնում է իբրեւ անհերքելի, անջնջելի ամոթ, որ խարանված է այն ժամանակվա եւ, ինչու չէ, այսօրվա մարդկության ճակատին՝ իբրեւ առաջին ցեղասպանություն: Այդ հարյուր ութ տարիներից ութը շատ կարեւոր են, որովհետեւ մենք ութ տարի շարունակ այլեւս ոչ թե ցեղասպանության զոհերին ենք ոգեկոչում, այլ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբադասած մարտիրոսներին՝ նահատակներին:*

....Աշխարհի գրեթե բոլոր կոտորածներն ու ցեղասպանությունները անտարբերության ծնունդ են: Սրա պատճառով ոչ միայն մարդկային կյանքի ցեղասպանություն կարող է տեղի ունենալ, այլեւ մտքի, հոգու, լեզվի, հոգեւոր արժեքների: Մարդկային եւ համազգային անտարբերությունը քանդում է հնարավոր բոլոր սահմանները:

Նահատակների խորհուրդը մեզ հավատարմության պատգամ է: Հավատարմություն այն բոլոր արժեքների հանդեպ, որոնք երբեւիցե մեր ազգի կյանքում ստեղծվել եւ շարունակում են ստեղծվել: Եթե այս հավատարմությունը չկա, եթե մենք անտարբերությամբ փորձում ենք մեր կյանքն ապրել իբրեւ բոլոր կենդանիներին տրված ժամանակամիջոց, ուրեմն այդ հավատարմության խորհրդի մեջ չենք: Հավատարմություն մինչեւ վերջ, որովհետեւ հավատարմությունում է ներփակված այն, ինչն անվանում ենք նահատակություն: Մենք մեր կյանքում, մեր ճիգերով, մեր ջանքերով, մեր արժեքների պահպանության համար մղվող պայքարով, մեր հավատքի՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած մեր հավատքի համար պայքարով նահատակներ ենք: Մենք պայքարում ենք, որ մնանք հավատարմության խորհրդի մեջ»:

Վերջում հայր Շահեն պատգամեց հավատացյալ հայորդիներին զերծ մնալ անտարբերությունից, որն ամեն մեղքի ծնողն է ու վախճանը հավատացյալ մարդու հոգեւոր կյանքի ու լինել հավատարիմ ամեն բանում:

Սուրբ պատարագի ավարտին եկեղեցականների թափորը, կրելով սուրբ նահատակների մասունքարանը, ուղղվեց դեպի Մայր տաճարի շրջափակ, ուր Աղոթքի եւ ուխտի խաչքարի առջեւ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ապրիլի 17-ին

ՀԲԸՄ Բուենոս Այրեսի պատվիրակությանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուենոս Այրեսի (Արգենտինա) Հայկական բարեգործական ընդհանուր միության ատենապետ Անտոնիո Սարաֆյանի գլխավորած պատվիրակությանը:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց ներկաներին՝ ուրախություն հայտնելով համայն հայության հոգեւոր կենտրոն այցելելու առիթով: Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ չնայած հայրենիքում ստեղծված ծանր կացությանը, նման այցելություններն առիթ են աշխարհասփյուռ հայորդիների հայրենասիրական ու հոգեւոր զգացումները նորոգելու եւ նոր խանդավառությամբ իրենց ներդրումը բերելու հայրենիքի ու համայնքային կյանքի առաջընթացին:

Հանդիպմանը Հայոց Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ արգենտինահայ գաղութն աչքի է ընկնում առանձնահատուկ կազմակերպվածությամբ, հայ կյանքի եւ ազգային արժեքների նախանձախնդիր պահպանմամբ, որոնց ականատեսն ու վկան է եղել Արգենտինա կատարած իր հովվապետական այցելությունների ժամանակ:

Ամենայն Հայոց Հայրապետը գնահատանքով անդրադարձավ նաեւ համայնքի կրթական հաստատությունների եւ ազգային կենտրոնների ազգօգուտ ու նվիրյալ գործունեությանը՝ պատգամելով նույն նախանձախնդրությամբ շարունակել հոգ տանելն արգենտինահայ երիտասարդների հայեցի դաստիարակության համար, որ իրենց նախնյաց օրինակով լինեն ազգասեր ու եկեղեցանվեր, զորացնեն համայնքային կյանքը եւ պահպանեն ազգային ինքնությունը:

Ապրիլի 24-ին

Ֆրանսիայի Սենատի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Սենատում Լեռնային Ղարաբաղի հարցով խմբի հիմնադիր եւ նախագահ, Արեւելքի քրիստոնյաների հարցով կապի խմբի նախագահ Բրունո Ռետայոյի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ պատվիրակության այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին լավագույն վկայությունն է հայ-ֆրանսիական բարեկամության: Վեհափառ Հայրապետն իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի Սենատին Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման, ինչպես նաեւ Արցախի անկախության մասին բանաձեւի ընդունման համար:

Անդրադառնալով տարածաշրջանում առկա դժվարին իրավիճակին՝ Հայոց Հայրապետը մտահոգությամբ անդրադարձավ արցախահայության եւ Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ Ադրբեջանի կողմից շարունակվող ոտնձգություններին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը կարեւոր նկատեց միջազգային հանրության հետեւողական ջանքերի գործադրումն Ադրբեջանի որդեգրած ծավալապաշտական քաղաքականությունը կանխելու հարցում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում եւ հետպատերազմյա շրջանում Հայաստանին եւ հայ ժողովրդին ցուցաբերած աջակցության ու զորակցության համար:

Իր հերթին Ֆրանսիայի Սենատի պատվիրակության ղեկավար Բրունո Ռետայոն ընդգծեց, որ ջանքեր կգործադրի միջազգային ատյաններում բարձրաձայնելու արցախահայության ազատ եւ անկախ ապրելու իրավունքի պահանջը: Այս առնչությամբ պատվիրակության ղեկավարը տեղեկացրեց Հայոց Հայրապետին, որ Ֆրանսիայի Սենատում ստեղծվել է Արցախի հարցով հանձնախումբ, որի նպատակն է աջակցել ու զորակցել արցախահայությանը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ գերիների վերադարձման, Բերձորի (Լաչին) միջանցքի արգելափակման, Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին:

Ապրիլի 29-ին

Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական եկեղեցու պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆինլանդիայի Միկկելիի թեմի առաջնորդ, Ֆինլանդիայի Լյութերական-Ավետարանական Եկեղեցու միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Սեպպո եպիսկոպոս Հեկկինենին եւ Միկկելիի թեմի դիվանապետ, միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Վերապատվելի Տիմո Ռոսքվիստին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ընդգծեց, որ նման այցելությունները նոր ուժ են հաղորդում երկու եկեղեցիների ջերմ հարաբերություններին:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ տարածաշրջանում առկա մարտահրավերներին, Հայաստանի պետական սահմանների նկատմամբ Ադրբեջանի ոտնձգություններին, Արցախի շրջափակմանն ու դրա հետեւանքով առաջացած հումանիտար ճգնաժամին, տակավին գերության մեջ պահվող հայորդիներին, ինչպես նաեւ արցախյան հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման խնդիրներին:

Իր հերթին Լյութերական-Ավետարանական Եկեղեցու եպիսկոպոսը, կարեւորելով տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատումը, Նորին Սրբությանը վստահեցրեց, որ Հայաստանի ու Արցախի համար այս դժվարին ժամանակահատվածում աղոթակից եւ զորակից են հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն:

«Արցախի վտանգված քրիստոնեական ժառանգությունը» թեմայով միջազգային համաժողով

Ապրիլի 28-ին Գերմանիայի Քյոլն քաղաքում տեղի ունեցավ միջազգային համաժողով՝ «Արցախի վտանգված քրիստոնեական մշակույթը» թեմայով: Համաժողովը կազմակերպվել էր Գերմանիայի Կաթողիկե եպիսկոպոսաց ժողովի, Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու եւ Գերմանիայի հայոց թեմի համագործակցությամբ: Ժողովին հրավիրված էին մասնագետներ Հայաստանից, Գերմանիայից եւ այլ երկրներից: Հայկական կողմից համաժողովին մասնակցում էին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սերովբե եպս. Իսախանյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության գրասենյակի տնօրեն Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը, ՀՀ մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանը, հուշարձանագետ Համլետ Պետրոսյանը: Համաժողովը բաղկացած էր երկու մասից: Առաջինում տեղի ունեցան աշխատանքային-մասնագիտական փակ քննարկումներ, որտեղ հայ եւ օտար մասնագետները ներկայացրին Արցախի հայկական-քրիստոնեական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանման կարեւորությունը, Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների եւ ընդհանրապես միջազգային իրավունքի ոտնահարումները, հայկական մշակութային ժառանգության ոչնչացման փաստերը, Արցախը միջազգային պաշտպանության տակ առնելու հնարավորությունները: ➥ էջ 3

Հոգեհանգստյան կարգ հայրենյաց դաշտոնների հոգիների խաղաղության համար

Ապրիլի 16-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Գայանե վանքում սուրբ պատարագի ավարտից հետո կատարվեց հոգեհանգստյան կարգ Տեղ գյուղի սահմանային հատվածում ադրբեջանական սադրանքի պատճառով ապրիլի 11-ին տեղի ունեցած փոխհրաձգության հետեւանքով զոհված հայրենյաց պաշտպանների հոգիների խաղաղության համար:

Մինչ հոգեհանգստյան արարողությունը Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը, անդրադառնալով օրերս սահմանային գոտում տեի ունեցած ցավալի միջադեպին, հրավիրեց եկեղեցականաց դասին ու ներկա հավատացյալ ժողովրդին աղոթք բարձրացնելու նահատակված քաջորդիների հոգիների հանգստության, ինչպես նաեւ վիրավորում ստացած զինվորականների շուտափույթ ապաքինման համար:

«Արցախի վտանգված քրիստոնեական ժառանգությունը»...

➥ էջ 2

Համաժողովի երկրորդ մասը բաց էր նաեւ հայ եւ օտար այցելուների համար: Միջոցառումը բացվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով, որն ընթերցեց Տ. Սերովբե եպս. Իսախանյանը: Իր օրհնության խոսքում Վեհափառ Հայրապետը կարեւորել էր նման միջոցառումների կազմակերպումը՝ միջազգային հանրությանը, եկեղեցական ու քաղաքական պատկան մարմիններին իրազեկելով եւ հրավիրելով միանալ Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված ջանքերին եւ ծրագրերին: Հայոց Հայրապետը նաեւ իր գնահատանքն ու օրհնությունն էր փոխանցել համաժողովի կազմակերպիչներին եւ մասնակիցներին:

Այնուհետեւ բանախոսությամբ հանդես եկան Տ. Գարեգին վրդ. Համբարձումյանը, ինչպես նաեւ Մայր Աթոռի Արցախի ժառանգության պահպանության գրասենյակի անդամ դոկտոր Յասմին Դում-Թրագուքը «Հայկական հուշարձանների ոչնչացումը, օտարումը եւ յուրացումն ադրբեջանական իշխանությունների կողմից Արցախի՝ Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներում եւ Մայր Աթոռի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պաշտպանության գրասենյակի գործունեությունը», իրավաբան Սառա Բաբայանը «Հայ քրիստոնեական մշակույթի փրկության ուղիները միջազգային իրավունքի տեսանկյունից» եւ աստվածաբան Հարալդ Զյուրմանը «Քրիստոնյա ժողովուրդների մշակութային ժառանգությունն ընդհանուր համատեքստում» թեմաներով:

Համաժողովը վարում էր ԳԴՀ-ի նախկին արտգործնախարար Մարկուս Մեկելը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Կարգալույծ է հռչակվել

Ապրիլի 14-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Տ. Կիրակոս քհն. Աղոյանը:

Տնօրինության համար հիմք է ծառայել Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արք. Ներսիսյանի միջնորդությունը եւ Կարգապահական հանձնախմբի եզրակացությունը Կիրակոս քահանայի կանոնազանց ընթացքի վերաբերյալ:

Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքին՝ Լեւոն Աղոյան ավազանի անունով:



Անիրավ տնտեսի առակը

Սկիզբը՝ թիվ 6–7

Անիրավ տնտեսի առակի բուն խորհուրդը Քրիստոս հայտնում է վերջում. «Եվ ես ձեզ ասում եմ. անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի, երբ այն պակասի, հավիտենական հարկերի տակ ընդունեն ձեզ» (Ղուկ. ԺԶ 9): «Մամոնա» բառն ասորերեն կամ արամերեն է եւ նշանակում է «ունեցվածք», «հարստություն»:

Քրիստոս այստեղ մամոնան «անիրավ» է անվանում ոչ թե այն պատճառով, որ բնությամբ չար է, այլ որ հարստության տերն այն անիրավությամբ է ձեռք բերել: Նաեւ՝ երբ որեւէ մեկն իր տիրոջ ունեցվածքն է տալիս աղքատին, դարձյալ անիրավություն է գործում, սակայն քանի որ աղքատին է տալիս, գովասանքի է արժանանում: Տերը գովում է անիրավ տնտեսին, որ կորստյան մատնված արծաթով աղքատներից իր համար բարեկամներ շահեց եւ նրանց միջոցով Քրիստոսի բարեհաճությանն արժանացավ:

«Անիրավ մամոնա» ասելով՝ չպետք է հասկանալ միայն այն գումարը, որ գողացվել, խարդախությամբ կամ անազնիվ ճանապարհով է ձեռք բերվել: Ավետարանում մամոնան անիրավ է համարվում, քանի որ հաճախ մեղանչումի պատճառ է դառնում. որեւէ մեկը կարող է արդար քրտինքով հարստություն դիզել, բայց այդժամ ավելին ձեռք բերելու պատճառով գայթակղվելու, մեղքի մեջ ընկնելու հավանականությունը մեծ է: Այս առակով նշանավորվող կիրակին, ուրեմն, հորդորում է զերծ մնալ ագահությունից: Առակի վերջում Քրիստոս ասում է. «Քիչ բանի մեջ հավատարիմը շատի մեջ էլ հավատարիմ է, իսկ քչի մեջ անիրավը շատի մեջ էլ անիրավ է» (Ղուկ. ԺԶ 10):

Համաձայն Մաղաքիա արք. Օրմանյանի մեկնության՝ տանուտերն Աստված է, իսկ տնտեսը՝ մարդը: Մեր կյանքը մերը չէ, Աստծունն է, Նա՛ է այն մեզ պարգեւել: Տնտեսը չունի իր սեփականությունը, այլ ամեն ինչ տիրոջ կողմից է նրան վստահվել: Տնտեսի նման մարդն էլ որեւէ բան չունի եւ ամեն ինչ Աստծուց է ստացել: Ուստի անհրաժեշտ է, որ ճիշտ տնօրինենք մեր կյանքը՝ հստակ գիտակցելով, որ մի օր հաշվետու պետք է լինենք Աստծուն: Օգտվելով Նրա պարգեւած շնորհներից՝ միեւնույն ժամանակ պարտավոր ենք դրանից բաժին հանել մյուսներին: Ամեն ոք, ով Աստծուց շնորհ է ստանում, այդ շնորհի տնտեսն է եւ պարտավոր է պատշաճ գործել, հակառակ դեպքում կզրկվի իր ունեցվածքից: Անիրավ տնտեսը խորհրդանշում է այն մեղավորներին, որոնք ներում են իրենց պարտապանների պարտքերը եւ աղքատներին առատապես բաշխում իրենց հարստությունն ու ունեցվածքը:

Անիրավ տնտեսի առակը բացահայտում է հոգեւոր արթնության խորհուրդը. ամենայն ժամ պատրաստ լինել Տիրոջ անսպասելի այցին, չհետաձգել բարի գործերը եւ չհակվել դեպի մեղքը՝ հուսալով, թե կարելի է հետագայում ապաշխարել, քանզի պատասխանատվության պահը կարող է գալ ամեն ակնթարթ: Այսպիսի գիտակցում ունեցողին Տերն անվանում է «հավատարիմ եւ իմաստուն տնտես» (Ղուկ. ԺԲ 42):

Փորձենք ամփոփել առակի ընթացքը եւ հանգուցալուծումը՝ բնագրային վերլուծության օգնությամբ դիտարկելով, թե ինչ ուղերձ է ցանկանում փոխանցել ավետարանիչը: Ինչպես արդեն նշեցինք, աստվածաշնչյան գրեթե բոլոր պատումները հիմնված են գրական տարբեր ժանրերի, միջոցների կիրառման, հասարակական ակնկալիքների, մշակութային սովորույթների վրա, որոնք դրվագը դարձնում են առավել տեսանելի եւ իրական: Ղուկասի ավետարանի ԺԶ գլխի առաջին համարը մեծահարուստ տիրոջ եւ տնտեսի հասարակական կերպարների տարրեր է պարունակում: Գալիլեացի գյուղացիների շրջանում հարուստները հաճախ ընկալվում էին իբրեւ բռնակալներ, ուստի այս առակում տերը կարող է լինել նմանօրինակ մի կերպար:

Հիսուսի առակներում հաճախ կիրառվում են պատմական տվյալ ժամանակաշրջանի հասարակությանը բնորոշ տեր–ծառա անհավասարության կենդանի օրինակներ: Ղուկասի ավետարանի է գլխի 25-րդ համարն արտահայտում է հասարակ ժողովրդի վերաբերմունքը հարուստ իշխանավորների նկատմամբ. «Հապա ինչ տեսնելու համար դուրս եկաք. փափուկ զգեստներով զարդարված մի մարդ. ահավասիկ նրանք, որ փառավոր զգեստներով են եւ փափուկ կենցաղով են ապրում, արքունիքներում են լինում»:

Առակի առաջին համարը մարդուն դնում է հստակ կանխորոշված դերի մեջ. ընթերցողն ակնկալում է, որ մեծահարուստը վարվելու է տարածված կարծրատիպային սկզբունքի համաձայն:

Երբ ասվում է, թե «նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է իր տիրոջ ունեցվածքը», մեր ուշադրությունն է գրավում «ամբաստանել» բառը՝ «dieblethe», որը «diabolos»-ի համարժեքն է՝ «սատանա» նշանակությամբ: Համաձայն Հովհաննես Բաուերի մեկնաբանության՝ ավետարանական այս նախադասությունը նշանակում է «թշնամական դիտավորությամբ մեղադրել»: Վ. Ֆորսթերը բերում է բառի բացասական իմաստով կիրառման բազմաթիվ օրինակներ՝ ցույց տալով, որ դժվար է տարբերակել «diabellein»-ը եւ «calumniate»-ը: Ինչպես բազմաթիվ մեկնաբաններ, նա եւս ժխտում է Անիրավ տնտեսի առակի բացասական բովանդակությունը:

«Թշնամական մտադրությամբ մեղադրանքը» հաստատում է մեծահարուստի վերաբերյալ ունեցած բացասական տպավորությունը, որ տարածված էր ժողովրդի շրջանում, եւ ընդգծում է տնտեսի անհուսալի կարգավիճակը: Բնական է, որ մեղադրանքը լսելուց հետո տնտեսը պետք է փորձի պաշտպանվել եւ արդարանալ: Ունկնդրի կամ ընթերցողի՝ գործողությունները կանխատեսելու կարողությունը կարեւոր է այս պարագայում: Տնտեսի դեմ ներկայացված մեղադրանքն առակը շարունակելու եւ բովանդակային առումով այն ընդլայնելու հնարավորություն է տալիս:

Մեծահարուստի արարքն անակնկալի է բերում. հակառակ սպասումներին, որ պետք է դատ լինի՝ պարզելու եղելությունը, պատմությունը կտրուկ զարգանում եւ հասնում է հանգուցալուծման: Տնտեսն անհասկանալի կերպով շահում է տիրոջ համակրանքը, սակայն նախքան այդ նույնիսկ հնարավորություն չուներ բացատրություններ տալու, արդարանալու կամ իրեն մեղադրողներին պատասխանելու: ➥ էջ 8

Ս. Ներսես Շնորհալու հանելուկները

Սկիզբը՝ թիվ 5–6

Ս. Ներսես Շնորհալին հանելուկներ է գրել նաեւ տարվա չորս եղանակների վերաբերյալ: Փոքրիկ բանաստեղծություն կարծես լինի գարնանը նվիրված հանելուկը (*Ա. Մնացականյան*, Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), Երեւան, 1980, էջ 212).

Կու գայ մանուկ գեղեցկագեղ,
Արդարամիտ, թագւորացեղ,
Նշան եթող ինք յամէն տեղ
Յամէն գուներն համացեղ:

Հանելուկների նյութ է դարձել նաեւ մարդը՝ իրեն շրջապատող աշխարհով եւ կենցաղով: Մարդուն, աշխարհին նվիրված հանելուկներում իշխում է փիլիսոփայական խոհը: Կյանքի անցողիկության խնդիրը շատ է հուզել Ս. Ներսես Շնորհալուն: Նա աշխարհը նմանեցնում է մի պանդոկի, որտեղ մարդը ժամանակավոր հյուր է (անդ, էջ 207–208).

Պանդոկ մի կայր վերայ երկրին,
Ի յանցաւոր ճանապարհին,
Որ անծանօթքն ի նմա գային,
Եւ ծանօթքն գնային:

Մինչ հիւրն գայր՝ մեծարէին
Եւ մինչ գնայր՝ կողոպտէին,
Ոչ թէ մասն ինչ իրս առնուին,
Այլ զբովանդակն խլէին:

Ս. Ներսես Շնորհալու որոշ հանելուկներ նվիրված են կնոջը: Աբիսակ Սոմնացին՝ հրեից Դավիթ թագավորի վերջին կինը, ըստ էության, թեեւ աստվածաշնչյան կերպար է, սակայն հանելուկում պատկերված է ոչ թե այլաբանորեն, այլ ուղղակի: Ըստ Գ. Հակոբյանի՝ «Շնորհալու ձեռքով է առաջին անգամ աշխարհիկ կինն իր արտաքին գեղեցիկ նկարագրով մուտք գործում մեր գեղարվեստական գրականության մեջ» (*Գ. Հակոբյան,* Ներսես Շնորհալի, Երեւան, 1964, էջ 231): Ահա մի օրինակ (*Ա. Մնացականյան*, Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.), էջ 231).

Կոյս մի կայր՝ աղուոր աչեր,
Ունէր կարմիր բարակ շրթներ,
Զողջ գիշերուն ածէր գրկեր,
Վաղն բարով ելնէր ի վեր:

Միջնադարյան մարդու կենցաղավարության մասին պատկերացում կարելի է կազմել հանելուկների նյութ դարձած առարկաներով. մոմ, ճրագ, հրահան, մաղ, նետ, աղեղ, թուր, խնոցի, պնակ, տաշտ, թի, բաղանիք, շաղափ, սանր, հայելի եւ այլն:

Բազմաթիվ հանելուկների նյութ է դարձել կենդանական աշխարհն իր ամենատարբեր ներկայացուցիչներով՝ վայրի եւ ընտանի կենդանիներ, թռչուններ, միջատներ, սողուններ եւ այլն: Այս հանելուկներում եւս Ս. Ներսես Շնորհալին հետապնդել է ուսուցողական նպատակ: Բացի կենդանիների վերաբերյալ ճանաչողական, բնութագրական գիտելիք տալուց՝ այս խմբի հանելուկները գերազանցապես ունեն բարոյախրատական եւ դաստիարակչական բնույթ: Ինչպես առակներում, այնպես եւ հանելուկներում այլաբանորեն, կենդանիների այս կամ այն հատկանիշների հետ համեմատություններով ներկայացվում, ծաղրվում կամ քննադատվում են մարդկային արատները: Գայլն ագահ է, «արուեստիւ գող», «աչեր ունէր զեդ զկայծ պօղ», նաեւ հափշտակող է: Աղվեսը խորամանկ է, «խելօքն ծով է ու Խիկար»: Խոզը տգեղության, անմաքրության խորհրդանիշն է: Ճնճղուկը մտնում է այգիները եւ այնքան խաղող ուտում, որ չափից ավելի է գիրանում: Այսպես՝ բազմաթիվ օրինակներով անուղղակիորեն քննադատվում են մարդկային արատները:

Մյուս կողմից՝ նկարագրվում են նաեւ դրական հատկությունները: Շունը, օրինակ, ընկերասիրության խորհրդանիշն է (անդ, էջ 294).

Գրած՝ ի գիրն աւետաբեր,
Անունն է չար, որ մի՛ յիշեր.
Է տիրասէր ու առնէ որսեր,
Հովուին չկայ զետ նա ընկեր:

Մրջյունի, մեղվի մասին տարբեր հանելուկներում գովերգվում է աշխատասիրությունը (անդ, էջ 277).

Քարգործ մի կայր խիստ իմաստուն,
Հրաշից ծաղկանց շինեց իր տուն,
Քաղցր խօսի նորա լեզուն,
Բնաւ չընկնի յիր աչքն քուն:

Բազմաթիվ են վայրի եւ ընտանի կենդանիներին, թռչուններին, միջատներին նվիրված հանելուկները. առյուծ, փիղ, ինձ, հովազ, գայլ, արջ, աղվես, կապիկ, կրիա, եզ, այծ, մաքի, խոյ, գառ, ուղտ, ձի, էշ, խոզ, կատու, շուն, ջորի, սագ, փայտփորիկ, աքաղաղ, սիրամարգ, արագիլ, արտույտ, թութակ, տատրակ, ծիծեռնակ, կկու, կաչաղակ, բու, բադ, կաքավ, ագռավ, թիթեռ, ճանճ, մորեխ, մոծակ, բզեզ, լու, ոջիլ եւ այլն: Այս հանելուկները պատկերացում են տալիս միջնադարյան մարդու աշխարհաճանաչողության սահմանների, բնության հետ ունեցած կապի, ապրելակերպի, կենցաղի մասին: Օրինակ՝ այծին նվիրված ընդամենը քառատող հանելուկից տեղեկանում ենք, թե ինչ նպատակներով է միջնադարյան մարդն օգտագործել այդ կենդանուն (անդ, էջ 287).

Յամեն շրջի ինքն ի քարեր,
Ունի ծախու մազէ քրծեր,
Գինոյ ունի աղուոր տկեր
Ու օժտէր ձրի դանկի կոթեր:

Մորեխի մասին հանելուկից պարզ է դառնում, որ այդ միջատներն այն ժամանակ էլ մեծ վնաս են հասցրել հողագործությանը, բերքին (անդ, էջ 280).

Թագւոր չունին, ժողուին առակ,
Իջնուն ահեղ անթիւ բանակ,
Եղուկ՝ ում գան անվարծ մշակ,
Հնձեն զամէն արտերն հստակ:

Այս հանելուկները եւս ունեն ուսուցողական բնույթ, միտված են գիտելիք հաղորդելուն: Բնութագրական է կրիային պատկերող հանելուկը. սողունների դասին պատկանող կրիան քայլում ու սնվում է կաթնասունների նման եւ ձու է ածում, ինչպես թռչունները (անդ, էջ 298).

Չորքոտանի է զետ զշուն
Ու ձու ածէ զետ թռչուն,
Խոտ նա ուտէ զետ զանասուն,
Ունի մզկիթ եւ ոսկրէ տուն:

Մեկ այլ օրինակ. ծիծեռնակը գարնան ավետաբեր թռչունն է, որը ձմռան ամիսներին չվում է դեպի Եգիպտոս (անդ, էջ 269).

Յեգիպտոսէ գայր զեդ կայծակ,
Հալաւ հագել սեւ ու սպիտակ,
Արապկերէն խօսի յստակ,
Գարնան բերէ մեզ եղանակ:

Մեծ թիվ են կազմում նաեւ մրգերին, բույսերին, բանջարեղեններին, ծառերին, հողագործությանն ու տնտեսությանը նվիրված հանելուկները, որոնք «արգասիք են հեղինակի ապրած ժամանակաշրջանի տնտեսական բուռն եռուզեռի, առեւտրի ու գիւղատնտեսութեան բարգաւաճման» («Արեւ» օրաթերթ, ԾԸ տարի, թիւ 16, շաբաթ, 13 ապրիլ, 1974, էջ 2): Բարիք տվող այգին համեմատվում է բազմազավակ մոր հետ (անդ, էջ 299).

Կին մի նստէր յոյժ փառաւոր,
Դստերք ունէր շատ ահաւոր,
Կանաչ հագնէր զերդ թագաւոր,
Ամենեցուն էր ցանկաւոր:

Շարունակելի

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ

✠ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ

Գեւորգ Ե Սուրենյանցի հայրապետության շրջան (1911–1930 թթ.)

1912 թ. սեպտեմբերի 30-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնի օրը, կատարվում է օրհնություն՝ ձեռամբ Գեւորգ Ե Սուրենյանցի (1911–1930 թթ.): Հայոց հայրապետը դեռեւս հուլիսի 2-ին հանձնարարել էր Սինոդին շրջաբերականներով տեղեկացնել Կ. Պոլսի, Երուսաղեմի պատրիարքներին, ինչպես նաեւ Ռուսաստանի, Եվրոպայի եւ Ամերիկայի թեմական առաջնորդներին: Արդեն սեպտեմբերի 24-ից սկսվում է ուխտավորների հոսքը դեպի Մայր Աթոռ, եւ մի քանի օրվա ընթացքում Վաղարշապատը բացարձակ այլ տեսք է ստանում: Ուխտավորների գոնե մի մասին տեղավորելու համար հայրապետական կոնդակով կարգվել էր հատուկ մասնաժողով՝ նախագահությամբ Մատթեոս վարդապետի եւ անդամակցությամբ Սիոն վարդապետի եւ Ռուբեն աբեղայի: Կարգադրիչ հանձնաժողովը հյուրերին տեղ է հատկացնում վանքի հյուրանոցում, ճեմարանի վերին հարկի սենյակներում, ինչպես նաեւ Սինոդի վերին հարկում, գյուղի դպրոցի շենքում: Ուխտավորների մեծ մասը, բնականաբար, Սուրբ Էջմիածնի շրջակա գյուղերից եւ մոտակա գավառներից էր, Ալեքսանդրապոլից, Շիրակից, Հին Նախիջեւանից, Սուրմալուի գյուղերից: Մեծ թվով ուխտավորներ էին եկել Թիֆլիսից, Ախալցխայից եւ Ախալքալաքից, Նոր Նախիջեւանի հայկական գյուղերից: Քաղաքական աննպաստ պայմանների պատճառով Արեւմտյան Հայաստանից ուխտավորներ չէին եկել: Թիֆլիսից ժամանած ուխտավորների հետ էին նաեւ ինը կույսերը՝ մայրապետ Հռիփսիմե Թայիրյանցի գլխավորությամբ («Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուանակոչութիւնը, Գէորգեան հոգեւոր ճեմարանի տօնը եւ սուրբ միւռոնի օրհնութիւնը», «Արարատ», 1912, էջ 888): Երեկոյան մեծ հրավառություն է կազմակերպվում. *«Գիւղացի հասարակ ժողովրդին մեծ բաւականութիւն էին պատճառում հրանօթները, որոնք իրենց բազմապիսի, գունեղ կրակէ լեզուներով եւ կայծերով, իրենց վեր ու վայր սլացումներով, պայթիւններով ու հազարաւոր հրային աստղիկների բաժանումովը դէպի իրենց էին գրաւում ուխտաւորների աչքերը եւ ուշադրութիւնը»* (անդ, էջ 891):

Մյուռոնի՝ վեց-յոթ տարին մեկ կատարվող օրհնությունն այնուհետեւ պետք է տեղի ունենար 1918–1919 թվականներին: Այս տարիներին, սակայն, մյուռոն չի օրհնվում. Առաջին աշխարհամարտի, Մեծ եղեռնի եւ սկսված ռուսական հեղափոխության պատճառով հայ ժողովուրդը հայտնվել էր ողբերգական իրավիճակում, իսկ նորանկախ Հայաստանը միայնակ դիմագրավում էր արտաքին ռազմական սպառնալիքներին եւ ներքին ճգնաժամային կացությանը: Մյուռոնի հաջորդ օրհնությունը հնարավոր է լինում իրականացնել միայն 1926 թվականին: Սույն թվականի սեպտեմբերի 26-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնին, Գեւորգ Ե Սուրենյանցն օրհնում է

մյուռոնը: Մյուռոնի վերջին օրհնությունը կատարվել էր 1912-ին, որից անցել էր 14 տարի: Երկրում հաստատված խաղաղությունը հնարավորություն ընձեռեց կատարելու Հայ Եկեղեցու ամենակարեւոր տոնախմբություններից մեկը: Սեպտեմբերի 20-ից սկսվել էր ուխտավորների երթը Սուրբ Էջմիածին: Ուխտավորներ էին եկել Հայաստանի գավառներից, նաեւ Վրաստանից, Ռուսաստանի հայաբնակ վայրերից: Միաբանների սենյակները հատկացվել էին հավատավոր հայորդիներին, որոնք եկել էին Սարդարապատից, Ապարանից, Շիրակից, Լոռի-Փամբակից, Ղազախից, Ծաղկաձորից, Նոր Բայազետից, Բասարգեչարից, Կոտայքից, Գառնիից, Թիֆլիսից, Բաթումից, Ախալցխայից, Ախալքալաքից, Բաքվից, Կրասնոդարից, Արմավիրից, Աստրախանից, Նոր Նախիջեւանից եւ այլ վայրերից: Այս օրերին ուխտավորների եւ այցելուների թիվը հասնում էր 40–50 հազարի («Մյուռոնօրհնությունը ԺԹ.–ԻԱ. դարերում», Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու, Ս. Էջմիածին, 2015, էջ 345): Այս թիվը կկրկնապատկվեր, սակայն տեղի էին ունեցել արգելառիթ հանգամանքներ: Հայաստանի տարբեր գավառներում անասունների ժանտախտ էր սկսվել, ուստի գյուղացիներից շատերը չկարողացան գալ. նրանք սայլերով պետք է գային, իսկ սայլերի երթեւեկությունը ժանտախտի պատճառով արգելված էր: Մյուռոնօրհնության օրը մեքենաների՝ Երեւան–Էջմիածին երթեւեկությունը դադարեցվում է: Սեպտեմբերի 24-ից մինչեւ 28-ը ուխտավորների հոսքը Ս. Էջմիածին չէր դադարում: Մյուռոնօրհնության հանդիսավոր արարողությունից հետո հայոց հայրապետը վեհարանում ընդունում է ուխտավորներին:

Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

Հովհաննես Տրապիզոնցի վարդապետի «Թուղթը» սրբալույս մյուռոնի հրաշագործության մասին

Սկիզբը՝ թիվ 7

Եվ այս Խ (40) օրերին, որ ապրեցինք ջունգլիում, մեր ուտելիքն այս էր. երբեմն փշերի պտուղներով եւ խոտով էինք սնվում, երբեմն՝ խաչափառով եւ այլ ժժմունքով (որդեր, միջատներ կամ մանր ձկներ), եւ այդ էլ հազիվ էինք գտնում ու երբեմն էլ նոր սատկած եղնիկ էինք գտնում եւ միսը մի քիչ արեւի տակ դնելով ու չորացնելով՝ ուտում էինք: Եվ այսպիսի դառնությամբ ապրեցինք մեր կյանքը Խ (40) օր, որովհետեւ Բ (2) ամիս լրացել էր, ինչ մենք հաց չէինք կերել: Եվ մեր գլուխներն առանց սափրելու էին, եւ մեր բոլոր հանդերձները փտեցին անձրեւների բազմահոս հեղեղումից, քանի որ այս երկրում ամառային եղանակին Դ (4) ամիս ամեն օր տիվ ու գիշեր սաստիկ անձրեւ է տեղում. եւ մենք եւս նույն անձրեւային ժամանակ այս փորձությանը պատահեցինք, քանզի մեր կերպարանքն այլանդակվել եւ հեռացել էր մարդկային տեսքից, եւ վայրենի կենդանի էինք դարձել՝ վերջին թշվառությամբ հասնելով մահվան դուռը:

Եվ այսպես մի օր, մինչ դառն ու ողորմելի նստած էինք, ասացի մեր տեր Հովսեփին. «Տե՛ս, եղբա՛յր, թե ուր ենք հասել մեր մեղքերի պատճառով, մինչ մենք Սուրբ Աթոռում էինք, այն օրհնյալ ջլպուրը (ձվով եւ սոխով ճաշ) տրտնջալով էինք ուտում եւ բամբասում էինք, թե ջլպուրի մեջ ծուխ է մտել, եւ կամ միսը մի քիչ նիհար է»: Ահա, հիրավի արժանահաս մեզ նույն պատիժն է, որ կրում ենք Աստծու արդար հրամանով, եւ այս ասելով՝ լաց եղանք աղիողորմ ու դառն արտասուքով:

Եվ այժմ, երբ լրացել էր Խ (40) օրը, ինչ մենք ջունգլի[ներ]ում էինք, եւ Հայոց ՌՄԺԱ (1762) թվականն էր եւ օգոստոսի ԺԶ (16)-ը՝ ամենաօրհնյալ Սուրբ Աստվածածնի վերափոխման շաբաթապասի ուրբաթ օրը, Պաղրգանջ կոչվող գյուղաքաղաքից եկավ անգլիացի հազարապետը՝ ԲԵ (200) զինվորով եւ այլ մարդկանցով, [որոնք] գետով ծովեզերք էին եկել Ի (20) նավով, նաեւ ամենայն պատրաստություններով, հրացանով եւ թնդանոթով՝ մեր խորտակված նավից դուրս եկած իրերը եւ կամ բամբակի հակերը հավաքելու մտադրությամբ: Այդժամ հանկարծ

մեզ գտավ եւ մեզ տեսնելով՝ գթաց ու խնամելով՝ տարավ իր նավակը եւ բազմեցրեց իր կողքին: Ապա կերակրեց մեզ հացով եւ ուրիշ ուտելիքներով, նաեւ հագուստ տվեց մեզ, Զ (6) օր պահեց իր մոտ եւ հետո խնամքով ուղարկեց մեզ Պաղրգանջ կոչված գյուղաքաղաքի իր բնակարանը, որտեղից որ եկել էր: Եվ Բ (2) օրվա ճանապարհ էր ծովեզերքից մինչեւ Պաղրգանջ, եւ այնտեղ եւս՝ այն օրհնյալ անգլիացու բնակարանում, մեզ Ը (8) օր խնամքով պահեցին, բայց մեր ազգից որեւէ մարդ չկար այնտեղ:

Բայց սկզբում, երբ ծովեզրին մեզ գտավ այս օրհնյալ անգլիացին, այդ նույն օրը սուրհանդակ[ներ]ի միջոցով նամակ[ներ] առաքեց բոլոր քաղաքները եւ մեր հայոց ազգին տեղեկություն տվեց մեր գտնվելու մասին: Եվ իսկույն մեծ Պետրոս աղայի փոքր եղբայր Բարսեղ աղան, որ այդ ժամանակ բնակվում էր Դաքա կոչված քաղաքում, որ Դ (4) օրվա ճանապարհով հեռու էր Պաղրգանջ քաղաքից, Գ (3) նավակ ուղարկեց, նաեւ իր սպասավորին՝ մի հայ տղայի եւ ուրիշ մարդկանց, [նրանք] հաց եւ հանդերձ բերեցին մեզ եւ եկան-տարան Դաքա քաղաք՝ մեր քրիստոնյա ազգի մեջ: Եվ մեկ ամիս հիվանդ մնացինք, բժիշկ բերեցին, դեղեր տվեցին եւ ապաքինեցին մեզ, որովհետեւ դառնագույն ցավերով տկար[ացել] էինք:

Իսկ երբ ամենուր լսեցին մեր ազատվելու մասին, թե՛ մեր ազգակիցները եւ թե՛ այլազգիները, շատ զարմացան, քանզի հավաստիորեն գիտեին, որ Բ (2) ամիս անցել էր մեր նավի խորտակումից, մեզ անկասկած մեռած էին համարում, ինչպես որ շատերը մեռան սովից եւ գազաններից: Քանզի առաջին օրը, երբ նավը խորտակվեց, փոքր նավակով գնացողների՝ Ժ (10) նավավարների հետ մի երեցորդի էր փրկվել, սակայն մեր ազատության մասին ինքն ամենեւին հոգ չէր տարել, այլեւ ամեն տեղ մեր խեղդամահ լինելու բոթը բանավոր եւ գրավոր հրապարակել էր: «Նաեւ խոջա Մինասյանց լուսահոգի Գրիգոր աղայի երկու կույս դուստրերի (որոնք Քրիստոսի շնորհներով մեզ հետ ազատվեցին) եղբորը եւ մյուս ազգականներին եւս բոթը հայտնել էր» («Բազմավէպ», 1857, փետրուար, էջ 45), որի համար մեզ կենդանի եւ ողջ չէին կարծում, որովհետեւ Բ (2) ամիս անցել էր: Բայց երբ լսեցին մեր ազատվելու եւ մանավանդ Աստծու անճառահիրաշ սքանչելիքով սրբալույս մյուռոնի գտնվելու մասին, հիրավի մեծ ցնծություն եւ ուրախություն ապրեցին մեր ազգակիցները, որոնք ապրում են Հնդկաց երկրում: Նաեւ ճշմարտապես պարծանք եւ պայծառազարդություն՝ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու մեր սուրբ հավատին: Հիրավի Տերն Իր մեծ ողորմությունն արեց մեր հայոց ազգին, քանզի այս դառն եւ երեկոյացյալ ժամանակներում ամենաքաղցր բարեգութ Աստված մեր լուսավորչադավան Հայկացեղ ազգին մի նոր փրկարար սքանչելիք հայտնապես ցույց տվեց՝ սրբալույս մյուռոնի գտնվելու մասին:

Բայց սրտիս մեջ եղածը նույնպես հայտնում եմ՝ հոգուս անպատմելի ցնծության եւ ուրախության մասին, քանզի այս աստվածագործ սուրբ մյուռոնը, որ անարժանիս հանձնելով՝ առաքեցիր այս Հնդկաց երկիրը, մեծ ու սրբազան Տերությանդ նախկին եւ անդրանիկ շնորհաբաշխության սրբալույս մյուռոնօրհնության պտուղն էր, որն օրհնելու եւ սրբազնագույն յուղի կարգը կատարելու ժամին անարժանս նույնպես ներկայանալով՝ ականատես եղա՝ [լինելով] ցանկալի Սուրբ Աթոռում մեծահանդես բազմության մեջ: Որի համար բյուր գոհություն եւ փառք բարերար Աստծուն, որ սուրբ մյուռոնի այսպիսի հրաշապատում սքանչելիքով ազատվեցինք ծովից եւ գազանների ժանիքներից:

Սրբալույս մյուռոնը, որ ծովափին գտանք, մեզ հետ եղած թուրքերն ու ֆռանկները եւս տեսան ու վկայում են: Բայց մեզ փույթ չէ նրանց վկայությունը:

Իսկ մենք, երբ ծովից փրկվեցինք, ԺԵ (15) հոգի էինք, եւ սրանցից Ե (5) հոգիս հայոց ազգից էինք, ինչպես որ վերեւում անունները գրել եմ, եւ Ե (5) հայազգիներս էլ անվնաս մնացինք թե՛ ծովից եւ թե՛ գազանների ձեռքից, բայց մնացյալ Ժ (10) մարդուց Գ (3) թուրքին գազանը տարավ, եւ Բ (2) ֆռանկին եւս գազանը տարավ, եւ մի ֆռանկ մեռավ ջունգլիում եւ, ի վերջո, ԺԵ (15) մարդուց Թ (9) հոգով ազատվեցինք՝ թե՛ մենք եւ թե՛ մնացած Դ (4) այլազգի անձինք, որոնցից Գ (3)-ը թուրք էին, եւ մեկը՝ ֆռանկ:

Եվ վերջապես այս ամենը եւ պատմությունը ամենամեծ Աստծու առաջ ճշմարտությամբ գրելով՝ մեր [գլխին եկած] բոլոր դեպքերի մասին ծանուցեցի իմ տեր Սրբազանիդ եւ շատ բաներ զանց առնելով՝ բաց թողեցի երկարության պատճառով, որպեսզի ձանձրույթ չպատճառեմ իմ Գերազանց տիրոջը եւ կամ ուրիշ ընթերցողներին կամ ունկնդիրներին, քանզի տեղի բարեպաշտ իշխաններից ոմանք բազում թախանձանքներով խնդրեցին մեզ մեր բոլոր դեպքերը գրել եւ տալ իրենց՝ որպես նոր պատմություն եւ լուր, իսկ մենք հանձն չառանք, բայց հիմա հարկն ստիպեց, որ պարտավոր ենք մեր ամեն որպիսությունը գրով ծանուցել իմ Գերափառ տիրոջը:

Գրվեց իմ ձեռքով Հնդկաց երկրի Բենգալիա գավառի Սեյդաբադ կոչված քաղաքում մեր ՌՄԺԲ թվականին (1763) եւ հունվար ամսվա ԺԵ (15)-ին՝ Սուրբ Սարգսի պասի չորեքշաբթի օրը:

Առաջաբանը եւ գրաբարից փոխադրությունը՝ Ասատուր ՍԱՐՅԱՆԻ
Բանասիրական գիտ. թեկնածու

Հայաստանը գոյատեւման պայքարի քառուղիներում

Իր պատմության ողջ ընթացքում Հայաստանը՝ որպես պետություն, մշտապես պայքարել է անկախության եւ միավորման համար: Հայկական հարցը լուծելու նպատակով տարբեր ժամանակներում հայ անվանի քաղաքական ու հասարակական գործիչները մեծածավալ աշխատանք են տարել թե՛ Հայաստանում եւ թե՛ հայրենիքի սահմաններից դուրս, սակայն բոլոր ջանքերը հիմնականում ապարդյուն են անցել: Օսմանյան կայսրության, այնուհետեւ նաեւ երիտթուրքական կառավարության ծրագրերով Հայկական հարցի «պարզ եւ հստակ» լուծում էր նախատեսված:

Հայկական հարցի շուրջ ծավալված պայքարում Արեւմուտքի խոշոր պետությունները մշտապես հանդես էին գալիս Օսմանյան կայսրության քաղաքականության պաշտպանության դիրքերից: Դրա վառ վկայությունն էր status quo-ի քաղաքականությունը՝ եվրոպական պետությունների ջանքերն Օսմանյան կայսրության ամբողջականությունը պաշտպանելու նպատակով:

Ռուսաստանի հետ առճակատման պայմաններում, իհարկե, արեւմտյան տերությունների շահերը պահանջում էին, որ ռազմավարական տեսակետից մի այնպիսի կարեւոր տարածք, ինչպիսին Հայկական բարձրավանդակն է, բնակեցված լիներ ոչ թե ռուսական կողմնորոշում ունեցող հայերով, այլ թուրքերով եւ մահմեդական այլ տարրերով: Նրանք քաջ գիտակցում էին, որ հայերի ռուսական կողմնորոշումը ոչ թե ժամանակավոր եւ մարտավարական, այլ ռազմավարական բնույթ ուներ: Եվ քանի որ հայերի ցեղասպանության սուլթանական ու երիտթուրքական քաղաքականությունն առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ, եվրոպական մեծ տերությունները միայն կեղծված ընդունեցին, թե դատապարտում են այս աննախադեպ ոճրագործությունը, մինչդեռ Մեծ եղեռնը հետեւանք էր նաեւ նրանց իմպերիալիստական-գաղութատիրական ձգտումների:

Առաջին աշխարհամարտի ավարտով քայքայվեց Օսմանյան կայսրությունը. Թուրքիայում ստեղծվեց ծանր կացություն: Այս պայմաններում ԱՄՆ-ի կառավարությունը հանգեց եզրակացության, որ Ռուսաստանի դեմ օգտագործելու համար Թուրքիան այլեւս «պիտանի չէ»: Վարչական, ազգային ու քաղաքական նոր միավորում էր անհրաժեշտ ստեղծել: Ըստ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի՝ այդպիսի միավորում կարող էր լինել Հայաստանը, եւ նա համաձայնեց ստանձնել Հայաստանի մանդատը: Նա գրում է. «Հայերի նկատմամբ գործադրած մեթոդիկ ջարդերը մեզ հարկադրում են Եվրոպայի սահմաններից հեռացնել այդ տգետ եւ անառողջ.... ավազակախմբերին՝ թուրքերին: Հայաստանին պետք է տրվի այն, ինչի նկատմամբ նա պատմական իրավունք ունի: Նա Թուրքիայից ավելի իրավունք ունի գոյատեւելու, որովհետեւ ինքն իրեն ավելի լավ կարող է կառավարել»:

ԱՄՆ-ը, սակայն, առանց երաշխավորված շահի՝ զոհողության չէր գնա: Եվ հարց առաջացավ՝ այդ Հայաստանը, որի մասին խոսում է Վ. Վիլսոնը, ստեղծվում է Ռուսաստանի դե՞մ, թե՞ նրա համար: Այս հարցին

պատասխանեց ամերիկյան կոնգրեսը, որը մերժեց ընդունել Հայաստանի մանդատը: Դրանով ԱՄՆ-ը Մերձավոր Արեւելքի հարցում վերջնականապես որդեգրեց եվրոպական մեծ տերությունների ավանդական քաղաքականությունը, այն է՝ հենվել Թուրքիայի վրա, աջակցել նրա ռազմաքաղաքական հզորացմանը եւ դարձնել ռազմավարական հենակետ ընդդեմ Ռուսաստանի:

Պանթուրքիզմը, որն առաջին հերթին ուղղված էր Ռուսաստանի դեմ, դարձել էր Թուրքիայի պետական քաղաքականությունը, իսկ այն ամենը, ինչն ուղղված էր Ռուսաստանի դեմ, խրախուսվում եւ աջակցություն էր ստանում Արեւմուտքի կողմից: Դեռ 1947 թ. ամերիկյան սենատոր Ռասելը բացահայտում է ԱՄՆ-ի՝ Թուրքիային ցույց տրվող օգնության իրական նպատակը. «Ես չեմ կարծում, թե այդ երկրների ժողովուրդները դեմոկրատիա ունեն: Բայց ես ցանկանում եմ օգնել թուրքերին Ռուսաստանի դեմ զինվելու գործում»:

Թուրքիան Արեւմուտքին անհրաժեշտ էր եւ է նաեւ Իրանի դեմ ռազմական ուժ ունենալու, Սիրիային չեզոքացնելու, իր գերիշխանությունը Մերձավոր Արեւելքում ապահովելու համար: Պանթուրքիզմը Թուրքիայի համար ժամանակավոր եւ անցողիկ նպատակադրում չէր, այլ ռազմավարական նշանակություն ունեցող դիրքորոշում: ➥ *էջ 8*



Խծաբերդ եւ Հին Թաղեր

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի զինված ուժերը՝ Թուրքիայի գործուն մասնակցությամբ, լայնածավալ ռազմական գործողություններ սկսեցին Արցախի Հանրապետության դեմ, որի արդյունքում հանրապետության զգալի մասը, Շուշիի եւ Հադրութի շրջանները հայտնվեցին Ադրբեջանի վերահսկողության ներքո: Իսկ նույն թվականի դեկտեմբերի 12-ին, խախտելով նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ համաձայնագրի պահանջները, ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները հարձակվեցին եւ կիրառելով ծանր հրետանային միջոցներ ու զինտեխնիկա՝ բռնագրավեցին Հադրութի շրջանի Խծաբերդ եւ Հին Թաղեր գյուղերը: Այդ գործողությունից հետո Ադրբեջանի ռազմական ղեկավարությունը հանդես եկավ հայտարարությամբ եւ պնդեց, որ այդ երկու գյուղերն իրենց ստորաբաժանումները գրավել են մինչ պատերազմի ավարտը, իսկ այնտեղ գտնվող մարդիկ ահաբեկիչներ են: Փաստացի՝ Խծաբերդ եւ Հին Թաղեր գյուղերի տարածքը, որ կազմում է ավելի քան 122 քառ. կմ, հայտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո: Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում հայկական զինված ուժերին հաջողվել էր պահել Հադրութի շրջանի այս երկու գյուղերը, որոնք, սակայն, դեկտեմբերի 12-ի բախումների արդյունքում հայտնվեցին թշնամու վերահսկողության ներքո: Ահա այս մարտավարական կարեւոր նշանակություն եւ հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու պատմության մեջ մեծ դերակատարում ունեցող երկու գյուղերին ենք անդրադառնալու այս հոդվածում:

Խծաբերդը Հադրութ շրջկենտրոնից 64 կմ հեռավորության վրա է, իսկ Ստեփանակերտ մայրաքաղաքից՝ 137 կմ: Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Արփագետիկ եւ Վաղավեր գյուղերի հետ միասին ընդգրկված է Խծաբերդ համայնքի կազմում: Գյուղի կողքով հոսում է Հագարի գետի վտակներից մեկը:

Տող բերդաքաղաքի թիկունքին՝ Դիզակի գավառի հռչակավոր Գտիչ վանքում, Առաքել վարդապետ Կոստանդյանցը 1850–1880-ական թթ. բազմաթիվ ձեռագրեր է թողել, որոնցում, ի թիվս այլ մատյանների, հիշատակություններ կան նաեւ Ագարի գավառի Եկեղեցաձոր եկեղեցու եւ Օձաբերդ ավանի մասին: Գյուղը գտնվում է Դիզափայտ լեռան ստորոտում՝ Դիզակ գավառում, որ հնում Հաբանդ էին անվանում, որովհետեւ մտնում էր Փոքր Սյունիքի մեջ: «Աշխարհացույց»-ում հիշատակվում է երկու Հաբանդ: Արցախի Հաբանդ գավառն անմիջականորեն սահմանակից է Սյունիքի Հաբանդին: Արցախի Հաբանդ գավառի տարածքը մոտավորապես համապատասխանում է ներկայիս Արցախի Հադրութի եւ Մարտունու շրջաններին:

Խծաբերդը Քիրս լեռան հարավարեւմտյան լանջին հիմնված մի հնագույն գյուղ է, որի պատմական հուշարձանները թվագրվում են սկսած է դարից: Խծաբերդի շրջակայքում գտնվում են բազմաթիվ բերդեր, որոնցից է Օձաբերդը, որի պատվին գյուղը կոչվել է Օձաբերդ կամ Խծաբերդ: Այս երկու անվանաձեւերը միեւնույն բնակավայրի գրական եւ բարբառային տարբերակներն են: Եկեղեցաձորն այս տարածքի նշանավոր եկեղեցին էր եւ հարկատու էր Գտիչ վանքին:

Ագարի (Հագարի) գավառի եկեղեցաձորցի իշխան Վարդանը, որ ունեւոր ու հարգված էր, իր կնոջ՝ Եղիսաբեթի հետ մտահոգ էր, որ վերին նախախնամությունն իրենց զավակ չի պարգեւում: Իշխանն Ամարասի վանքի մոտ այգի էր հիմնել եւ Գրիգորիս կաթողիկոսի գերեզմանի հարեւանությամբ մատաղ էր անում, որ ամենակարող Տերը երեխա պարգեւի: Շուտով կատարվում է ամոլի փափագը. Աստված իշխանին եւ նրա սիրասուն կնոջը զավակ է պարգեւում, որին անվանակոչում են Գրիգոր՝ ի պատիվ Ամարասի վանքում հանգչող Սուրբ Գրիգորիսի: Սակայն մի օր երազում մի ալեւոր նրանց հայտնում է, որ իրենց երկար սպասված զավակը մահանալու է օձի խայթոցից: Վարդան իշխանը որդուն փրկելու համար բերդ է կառուցում՝ 40 ոտնաչափ բարձրությամբ, 10 ոտնաչափ լայնությամբ: Սակայն այգուց, այնուամենայնիվ, օձ է սողոսկում փոքրիկ Գրիգորի անկողին: Բայց ժիր եւ ուշիմ Գրիգորը սատկացնում է օձին՝ ի չիք դարձնելով չար գուշակությունը:





Արցախի բարբառում օձին *օխց* կամ *օղձ* են ասում, հետեւաբար Օձաբերդն այս բարբառում Օխցաբերդ է: Ուստի, ենթադրվում է, որ *օ* ձայնավորն անկել է, եւ *g>ծ* հնչյունափոխություն է տեղի ունեցել: Ահա այդպես էլ Օձաբերդը դարձել է Խծաբերդ:

Խծաբերդի խոսվածքն Արցախի բարբառի բաղադրիչն է, իսկ վերջինս *Ս* ճյուղի բարբառ է, ինչը նշանակում է, որ բայի սահմանական եղանակի ներկա եւ անցյալ անկատար ժամանակաձեւերում *Ս* բաղաձայնը կազմություններում էական դեր ունի, օրինակ՝ խոսում եմ – խուսիսըմ, խոսում էի – խուսիս ըմ լալ եւ այլն:

Դեռեւս Ի դարասկզբին նշանավոր «Մշակ» թերթը գրում է. «Երկար ժամանակ Օձաբերդ, Հարար գիւղերը հարստահարւում էին ալիանլու ցեղի յայտնի աւազակների յարձակումներից ու կողոպուտներից. այդ ցեղը բացի աւազակութիւնից, ոչ մի արհեստ չունի, եւ ապրում է հայ ժողովրդի.... վաստակած աշխատանքով»:

ԺԹ դարասկզբին Խծաբերդ գյուղն ուներ 600–700 ծուխ բնակչություն: Նրանք քաջ ու անվախ մարդիկ էին եւ զենքի ուժով պաշտպանում էին իրենց ինքնուրույնությունը. հրաժարվում էին պարսիկ խանին հարկ վճարելուց եւ ամեն անգամ հետ էին մղում ալեանլու ցեղի քուրդ ցեղապետի հարձակումները: Տեսնելով, որ չի կարողանում զենքի ուժով Խծաբերդի հայերին ծնկի բերել՝ խանը դիմում է իրենց համար սովորական դարձած միջոցի: Հյուրասիրության պատրվակով ճաշկերույթի է հրավիրում գյուղի երեւելիներին ու բոլորին թունավորում է, որից հետո հարձակվում է գյուղի վրա: Բայց գյուղի առաջնորդների գլխատումից հետո անգամ, խայտառակ պարտություն կրելով, հեռանում է Խծաբերդից: Խծաբերդցիների նկատմամբ ատելությամբ լցված խանն այս անգամ ուրիշ խարդավանքի է դիմում: Կրոնական տոներից մեկի ժամանակ, երբ համայնքի անդամները եկեղեցում մասնակցում էին ծեսին ու աղոթքին, խանը հարձակվում է անպաշտպան գյուղացիների վրա եւ սրախողխող անում անզեն մարդկանց: Սպանդը տեւում է մոտ 3 օր: Խծաբերդի մոտակա գետակն արյունով է լցվում եւ այդ ժամանակներից սկսած՝ այն անվանվում է *հարամ* (անմաքուր): Գյուղն ամբողջովին ամայանում է, իսկ ողջ մնացածները փախչում են տարբեր վայրեր: Հիմնական մասը բնակություն է հաստատում Շուշիի մոտակա ժայռի տակ, որ հետագայում անվանակոչվում է Քարին տակ: Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Քարին տակ գյուղն առավելապես հիմնադրել են Խծաբերդ եւ Հին Թաղեր գյուղերից տեղահանված գերդաստանները:

1991 թ. պատմությունը կրկնվում է: Թուրքերը նորից այրում են Խծաբերդի տները, սպանում 7 երիտասարդի: Ամբողջ գյուղը դարձյալ սգի մեջ է հայտնվում: Հինգ տարի գյուղում երաժշտություն չէր հնչում, անգամ՝ մեծագույն ուրախությունների ժամանակ:

1991 թ. Խծաբերդցի Նարվիկ Գեւորգյանը, որ բնակվում էր Երեւանում, վերադառնում է գյուղ, ինքնապաշտպանական ջոկատ է կազմավորում եւ ստանձնում հրամանատարությունը:

Լեգենդար հրամանատար Մոնթե Մելքոնյանն Արցախյան առաջին պատերազմի օրերին այցելում է Խծաբերդ եւ հյուրընկալվում գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Նարվիկ Գեւորգյանի ակութում: Տեսնելով հրամանատարի չորս զավակներին՝ Մոնթեն ասում է.

– Նարվի՛կ, էս լաճերին ո՞ւմ կթողնիս, որ կբարձրանաս դիրքեր:

– Ասլան հայրիկիս, մայրիկիս կթողնեմ, հրամանատա՛ր,– իպարտորեն պատասխանում է Նարվիկ Գեւորգյանը:

Հետո, երբ բարձրանում են դիրքեր, Մոնթեն, որ լավ գիտեր Խծաբերդի դերն ու նշանակությունը, այն անվանում էր Արցախի երկաթյա դարպաս, Նարվիկ Գեւորգյանին դիմում է՝ ասելով.

– Թուն հերոս ես, որ այս պայմաններում արծիվներուդ հետ այս գյուղը պահեցիր:

Խծաբերդի ինքնապաշտպանական ջոկատը գյուղի ազատագրումից հետո մասնակցում է նաեւ Ջրականի (Ջաբրայիլ), Որոտանի (Կուբաթլու), Կովսականի (Զանգելան), Վարանդայի (Ֆիզուլի) շրջաններում հակառակորդի կրակակետերի ոչնչացմանը, իսկ հրամանատար Նարվիկ Գեւորգյանը հետմահու պարգեւատրվում է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով եւ ՀՀ «Արիության» մեդալով:

Խծաբերդ գյուղի շրջակայքում հաշվառված են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ՝ եղցուն ձոր եկեղեցին՝ համանուն գյուղատեղիով, սրբատեղի՝ Թեղին սուրբ, բազմաթիվ խաչքարեր, գերեզմանոց՝ Տեմին սեռ: Պահպանվել են Օձաբերդ, Հազարափրկիչ, Անմտեղ բերդերի ավերակները՝ պարիսպների մնացորդներով, Ղալալվի բերդ-քարայրը: Գյուղամիջում եղել է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ սրբատաշ քարերով, եռանավ դահլիճով, որը, սակայն, չի պահպանվել: Նշանավոր է նաեւ Սլկահան սար բնակատեղին:

Խծաբերդի եղցուն ձոր եկեղեցին գյուղից հարավ-արեւելք է՝ եղցուն ձոր կոչված հանդամասում (անվանում են նաեւ Հարթագոմերի եկեղեցի): Այն մինչեւ 2020 թ. 44-օրյա պատերազմը կիսավեր էր: Եկեղեցու շրջակայքում տարածվում է գերեզմանոցը, որտեղ ուշագրավ են երեք խաչքարերը, որոնք հավանաբար ԺԱ–ԺԳ դարերի են: Նույն ժամանակաշրջանին է վերագրվում նաեւ եկեղեցին, որ շրջագծով պարփակված է եղել պարիսպներով, որոնց պատերը՝ 1,5 մ բարձրությամբ, պահպանված էին մինչեւ պատերազմը: Ճարտարապետահորինվածքային քննության համաձայն՝ ԺԶ–ԺԷ դարերի եղցուն ձոր եկեղեցին՝ կառուցված տեղական կրաքարով եւ կրաշաղախով, գյուղատեղիի կենտրոնում է՝ կիսավեր վիճակում: Արեւելքից բացված կենտրոնական լուսամուտին զուգահեռ՝ նույն ուղղությամբ, խորանի պատի մեջ ագուցված են փոքրիկ խաչքարեր, որոնցից յոթը պահպանվել են ամբողջապես:

Պատմություն եւ մշակութային հարուստ ժառանգություն ունեցող գյուղերից է Հադրութի շրջանի Հին Թաղերը, ինչը վկայում են գյուղում եւ շրջակայքում պահպանված բազմաթիվ պատմամշակութային հուշարձանները: Հին Թաղեր գյուղը շրջկենտրոնից 52 կմ հեռավորության վրա է, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 125 կմ:

1988 թ. Հին Թաղերում կազմավորվում է ինքնապաշտպանական ջոկատ (հրամանատար՝ Հ. Ամիրյան), որը 1991 թ. հուլիսից կոչվում է «Վրիժառու»: Ջոկատը համալրվել է այդ ժամանակ Ադրբեջանի զինված ուժերի բռնազավթած Արեւշատ եւ Խանձաձոր գյուղերի կամավորականներով: 1992 թ. հուլիսին ջոկատը փոխակերպվել է Հին Թաղերի առանձին վաշտի, իսկ սեպտեմբերին Հին Թաղերի, Խծաբերդի, Տումիի եւ Մոխրենեսի ջոկատների հիման վրա ստեղծվել է Հադրութի պաշտպանական շրջանի գումարտակներից մեկը: Ջոկատը մասնակցել է Հադրութի, Կովսականի, Ջրականի շրջանների ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին: Հին Թաղեր գյուղում պահպանվել են Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին (ԺԹ դ.), գերեզմանոցը (ԺԷ դ.), բազում խաչքարեր՝ Թ–ԺԱ դարերի, գյուղատեղիի մնացորդներ՝ դարձյալ Թ–ԺԱ դարերի:

2020 թ. դեկտեմբերի 12-ին՝ 44-օրյա պատերազմի ավարտից 3 օր անց, խախտելով նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի պայմանավորվածությունը, ադրբեջանական զինված ուժերը բռնագրավում են ռազմավարական կարեւորություն ունեցող Խծաբերդ եւ Հին Թաղեր գյուղերը: Ներկայումս այդ երկու գյուղերի եւ այնտեղի պատմամշակութային հուշարձանների մասին ոչինչ հայտնի չէ:

Հասմիկ ՄԱԴՈՅԱՆ

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022-ի թիվ 19—2023-ի թիվ 7



Նամակ երեսուներկուերորդ
ՀԱՍԿԱՆԱԼ ԱՐՎԵՍՏԸ

[Գ մաս]

Երբեմն այն տեսակետը, ըստ որի դիտարկում են արվեստի ստեղծագործությունը, ակնհայտորեն անբավարար է լինում: Ահա սովորական «անբավարարություն». դիմանկարը դիտարկում են միայն այսպես. այն «նման է» կամ «նման չէ» բնօրինակին: Եթե նման չէ, ապա դա ամենեւին էլ դիմանկար չէ, թեեւ կարող է լինել արվեստի հիանալի ստեղծագործություն: Իսկ եթե պարզապես նմա՞ն է: Բավարա՞ր է այդ: Չէ՞ որ նմանություն ավելի լավ է փնտրել գեղարվեստական լուսանկարում: Այստեղ ոչ միայն նմանություն կա, այլ նաեւ փաստաթուղթ. բոլոր կնճիռներն ու բշտիկները իրենց տեղում են:

Իսկ ի՞նչ է անհրաժեշտ դիմանկարին՝ բացի պարզ նմանությունից, որ այն արվեստի ստեղծագործություն լինի: Նախ եւ առաջ նմանությունն ինքնին կարող է լինել մարդու հոգեւոր էության մեջ ներթափանցման տարբեր խորություններ: Դա գիտեն նաեւ լավ լուսանկարիչները՝ ձգտելով որսալ նկարելու հարմար պահը, որ դեմքին լարվածություն չլինի՝ սովորաբար կապված նկարահանմանն սպասելու հետ, որ դեմքի արտահայտությունն իրեն բնորոշ լինի, որ մարմնի դիրքն անկաշկանդ եւ անհատական լինի՝ տվյալ մարդուն հատուկ:

Այդպիսի «ներքին նմանությունից» շատ բան է կախված դիմանկարի կամ լուսանկարի՝ արվեստի ստեղծագործություն դառնալու համար: Սակայն խոսքը նաեւ մեկ այլ գեղեցկության վերաբերյալ է՝ գույնի, գծերի, հորինվածքի գեղեցկության: Եթե վարժվել եք դիմանկարի գեղեցկությունը դրանում պատկերվածի գեղեցկության հետ նույնացնելուն եւ կարծում եք, որ չի կարող լինել դիմանկարի առանձնահատուկ գեղանկարչական կամ գծանկարչական գեղեցկություն՝ պատկերված դեմքի գեղեցկությունից անկախ, ապա դուք դեռեւս չեք կարողանում հասկանալ դիմանկարչությունը:

Այն, ինչ ասվել է դիմանկարչության մասին, առավելապես վերաբերում է բնանկարչությանը: Դրանք նույնպես «դիմանկարներ» են, միայն թե բնության դիմանկարներ: Եվ այստեղ պետք է լինի նմանություն, բայց առավել մեծ չափով անհրաժեշտ է բնանկարչության գեղեցկությունը՝ տվյալ վայրի «հոգին»՝ «տեղանքի հանճարը» հասկանալու եւ արտացոլելու կարողությունը: Բայց հնարավոր է, որ նկարիչը բնությունը պատկերի խիստ «շտկումներով»՝ ոչ թե այն, ինչ կա, այլ այն, ինչ ցանկանում է պատկերել այս կամ այն կարեւոր պատճառով: Սակայն եթե նկարիչն իր առջեւ ոչ թե պարզապես նկար ստեղծելու, այլ բնության կամ քաղաքի որոշակի վայր պատկերելու նպատակ է դնում, իր նկարում պատկերում է որոշակի տեղանքի որոշակի նշաններ, ապա նմանության բացակայությունը դառնում է խոշոր թերություն:

Դե, իսկ եթե նկարիչն իր առջեւ պարզապես ոչ թե բնապատկեր, այլ միայն գարնանային գույներ նկարելու նպատակ է դրել. մատղաշ կանաչ կեչիներ, կեչու կեղեւի գույնը, երկնքի գարնանային գույնը, եւ այդ ամենը կամայականորեն դասավորել է այնպես, որ գարնանային գույների գեղեցկությունն ի հայտ գա առավել ամբողջականությամբ: Անհրաժեշտ է հանդուրժողաբար վերաբերվել նաեւ նման փորձին եւ նկարչին չներկայացնել այն պահանջները, որոնք նա չի ձգտել բավարարել:

Դե, իսկ եթե ավելի հեռուն գնանք ու երեւակայենք մի նկարչի, որը կձգտի արտահայտել ինչ-որ անձնական բան՝ միայն գույների, հորինվածքի կամ գծերի համադրման միջոցով՝ ընդհանրապես չձգտելով որեւէ բանի հետ նմանության: Պարզապես արտահայտել ինչ-որ տրամադրություն, աշխարհի վերաբերյալ ինչ-որ անձնական ընկալում: Նման տեսակի փորձերը մերժելուց առաջ անհրաժեշտ է ուշադրությամբ մտածել: Այն ամենը, ինչ առաջին հայացքից չենք հասկանում, կարիք չկա, որ դրանք մի կողմ նետենք, մերժենք: Կարող ենք չափազանց շատ սխալներ թույլ տալ: Չէ՞ որ նաեւ լուրջ, դասական երաժշտությունը չի կարելի հասկանալ առանց երաժշտություն ուսումնասիրելու:

Լուրջ գեղանկարչությունը հասկանալու համար պետք է սովորել:

Նամակ երեսուներեքերորդ
ԱՐՎԵՍՏՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆԻ ՄԱՍԻՆ

Նախորդ նամակում ասել եմ. ուշադրություն դարձրեք մանրամասների վրա: Այժմ ցանկանում եմ խոսել այն մանրամասնությունների վերաբերյալ, որոնք, ինչպես ինձ է թվում, հատկապես պետք է ինքնին գնահատել: Դրանք մանրամասներ, մանրուքներ են, որոնք վկայում են մարդկային պարզ զգացմունքների, մարդկայնության մասին: Դրանք կարող են լինել նաեւ առանց մարդկանց՝ բնապատկերում, կենդանիների կյանքում, բայց ամենից հաճախ՝ մարդկանց հարաբերություններում:

Հինռուսական սրբապատկերները խիստ «կանոնական» են: Դա ավանդական արվեստ է: Եվ դրանցում ավելի արժեքավոր է այն ամենը, ինչը շեղվում է կանոնականությունից, ինչը պատկերվողի նկատմամբ նկարչի մարդկային վերաբերմունքն ի հայտ բերելու հնարավորություն է ընձեռում: «Քրիստոսի ծնունդը» ներկայացնող մի սրբապատկերում, որտեղ դեպքերը տեղի են ունենում կենդանիների համար նախատեսված քարայրում, պատկերված է մի փոքր գառնուկ, որը լիզում է մեկ այլ՝ ավելի մեծ ոչխարի վիզը: Հնարավո՞ր է՝ դուստրը գգվում է մորը: Այս մանրամասնությունը բոլորովին նախատեսված չէ «Սուրբ Ծննդյան» հորինվածքի պատկերագրական խիստ չափանիշներով, ուստի այն առանձնահատուկ հուզիչ է թվում: Խիստ «պաշտոնականի» միջավայրում հանկարծ այդպիսի հաճելի մանրամասնություն...

Նիկիտնիկի մոսկովյան եկեղեցու ժէ դարի որմնանկարներում՝ կարծրատիպային բնատեսարանում, անսպասելիորեն պատկերված է դեռահաս կեչի, այո՛, այնքան «ռուսական», սրտաշարժ, որ անմիջապես հավատում ես, որ նկարիչը գիտեր գնահատել ռուսական բնությունը:

Պահպանվել են Բուլղարիայի Ռիլա վանքի վանականների ինքնակենսագրական ստեղծագործությունները: ԺԹ դարի այդպիսի մի ինքնակենսագրության մեջ պատմվում է վանքի համար նվիրատվություններ հավաքող մի վանականի կյանքի մասին: Իսկ նա խիստ թշվառ իրավիճակներում էր հայտնվել. երբեմն տների դռները փակվում էին նրա առջեւ, ներս չէին թողնում գիշերելու, հաճախ ուտելու բան չուներ (վանքին նվիրաբերված գումարներից իր համար ոչինչ չէր վերցնում) եւ այլն: Եվ ահա նա իր գրառումների մի հատվածում բացականչում է. «Օ՜, վանք իմ, վանք, այնտեղ որքան տաք է եւ կուշտ»: Այս վանականի պատմությունն ավարտվում է անեծք-բանաձեւումով՝ ուղղված նրան, ով կփչացնի գիրքը, կաղավաղի շարադրանքը եւ այլն: Բայց հետո գրում է. «Եթե սա գրում եմ, ապա իմ մասին վատ մի մտածեք, որ ես չար եմ ու վատը»: Իսկապես հուզիչ չէ՞: Նկատի ունեցեք, որ անփույթ ընթերցողին եւ անուշադիր արտագրողին ուղղված այս «անեծքը» սովորական քարացած արտահայտություն էր. այդպես էին ավարտվում բազմաթիվ ձեռագրեր:

Եվ ահա խորապես մարդկային զգացմունք Ավվակումի եւ բոյարուհի Ֆ. Պ. Մորոզովայի նշանավոր նամակագրությունից, հենց այն բոյարուհու, որը պատկերված է Սուրիկովի՝ Տրետյակովյան պատկերասրահում պահվող նկարում:

Ավվակումը բոյարուհի Մորոզովային ուղղված բարձրագոչ, ճոռոմ արտահայտություններով գրված նամակի վերջնամասում մխիթարում է նրան մանկահասակ սիրելի որդու մահվան համար. «Եվ արդեն չկա մեկը, որին համրիչով խարազանես, եւ չկա մեկը, որին նայես, թե ինչպես է ձիուկ քշում, եւ չկա մեկը, որի գլուխը շոյես... հիշում ես՝ ինչպես էր նախկինում»: Իսկ ավարտին կրկին գրում է նրան. «Եվ այդ էլ բավ է. որքան բոյարություն ես արել, հիմա պետք է մտնել երկնային բոյարություն»:

Նույն բոյարուհի Մորոզովան գրում է ավագերեց Ավվակումին. «Մեղքերիս շատացման պատճառով ամեն կողմից մեծ փոթորիկ է հոգուս վրա հասել, իսկ ես՝ մեղավորս, անհամբեր եմ»: Իսկ ինչո՞ւ է «անհամբեր»: Նա մտահոգվում է ավագ որդու համար լավ կին գտնելու մասին: Նրա կարծիքով՝ երեք առաքինություն պետք է ունենա այդ կինը. պետք է լինի «բարեպաշտ, աղքատասեր եւ հյուրասեր»: Այնուհետեւ հարցնում է. «Որտեղի՞ց գտնեմ՝ հայտնի տոհմից, թե՞ հասարակից: Որոնք հայտնի տոհմի աղջիկներ են, վատն են, այն աղջիկներն են լավը, որոնք հասարակ տոհմից են»: Չէ՞ որ այս դիտարկումը վկայում է բոյարուհու խելքի, նրանում բոյարական գոռոզամտության բացակայության մասին:

Ընդունված էր կարծել, որ Հին Ռուսիայում իբրեւ թե վատ էին ընկալում բնության գեղեցկությունը: Այս կարծիքը հիմնվում էր այն իրողության վրա, որ հինռուսական ստեղծագործություններում հազվադեպ են բնության մանրամասն նկարագրությունները, չկան բնապատկերներ, ինչպիսիք առկա են նոր գրականության մեջ: Բայց ահա թե ինչ է գրում ԺԶ դարում Դանիել մետրոպոլիտը. «Իսկ եթե ցանկանում ես աշխատանքից հանգստանալ, դուրս արի տանդ բակ եւ նայիր երկնքին, արեւին, լուսնին, աստղերին, թե՛ բարձր եւ թե՛ ցածր ամպերին եւ այսպիսով հանգստացիր»:

Ես օրինակներ չեմ բերում հանրածանոթ, որպես բարձրարվեստ ճանաչված ստեղծագործություններից: Որքան մարդկային հուզիչ դրվագներ կան «Պատերազմ եւ խաղաղություն» վեպում, հատկապես այն ամենում, ինչը կապված է Ռոստովների ընտանիքի հետ, կամ՝ Պուշկինի «Կապիտանի աղջիկը» վեպում եւ գեղարվեստական յուրաքանչյուր ստեղծագործության մեջ: Չէ՞ որ դրանց համար էլ սիրում ենք Դիքենսին, Տուրգենեւի «Որսորդի հիշատակարանը», Ֆյոդոր Աբրամովի հրաշալի «Դալար խոտը» կամ Բուլգակովի «Վարպետը եւ Մարգարիտան»:

Մարդկայնությունը միշտ եղել է մեծ ու փոքր գրականության կարեւորագույն երեւույթներից մեկը: Արժե փնտրել մարդկային պարզ զգացմունքների ու հոգատարության այս դրսեւորումները: Դրանք թանկարժեք են: Դրանք հատկապես մեծարժեք են, երբ հայտնաբերում ես նամակագրության, հիշողությունների, փաստաթղթերի մեջ: Օրինակ՝ կան մի շարք փաստաթղթեր, որոնք վկայում են այն մասին, թե ինչպես են հասարակ գյուղացիները տարբեր պատրվակներով խուսափել Պուստոզերսկում բանտի կառուցմանը մասնակցելուց, որտեղ պետք է կալանավոր լիներ Ավվակումը: Եվ այդ ամենը բացարձակապես միահամուռ: Նրանց խուսահնարքները՝ գրեթե երեխայական, բնորոշում են նրանց որպես պարզ ու բարի մարդկանց:



Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

Հայաստանը գոյատեւման պայքարի քառուղիներում

➥ էջ 5

Երիտթուրքերն այն պետական քաղաքականություն դարձրին, եւ մինչ օրս էլ պանթուրքիզմը մնում է Թուրքիայի իշխող դասակարգի արտաքին քաղաքականության շարժիչ ուժը:

Աբդուլ Համիդի կարծիքով՝ իր գահի անսասանությունը հնարավոր էր ապահովել միայն կայսրության ողջ բնակչության մահմեդականացմամբ եւ խալիֆայության քաղաքական տիրապետության շրջանակի ընդլայնմամբ: Այն բանից հետո, երբ Եվրոպայում տարածքային զգալի կորուստներ կրեց, նա ուշադրությունն ամբողջապես բեւեռեց դեպի Արեւելք: Այդ ժամանակ սկսվեց ձեւավորվել Բալկաններից դեպի Մոնղոլիա ձգվող թուրանական կայսրություն ստեղծելու «վեհ» գաղափարը, որը եւ հանդիսացավ բռնի թուրքացման քաղաքականության գլխավոր պատճառը: Ծրագրվում էր նվաճել նաեւ Հնդկաստանը: Համիդը շատ ջանքեր գործադրեց, որ արաբներն իրեն խալիֆա ճանաչեն: Այդ նպատակով նա բոլոր միջոցներով սիրաշահում էր արաբական ցեղերի առաջնորդներին եւ ազդեցիկ անձանց: Նրա ջանքերը, սակայն, իզուր են անցնում, քանի որ արաբներն ատում էին օսմանյան տիրապետությունը եւ պայքարում նրա դեմ:

Սուլթանին փոխարինում են երիտթուրքերը: Նրանք թուրքական բուրժուազիայի ներկայացուցիչներն էին եւ համառորեն իշխանության էին ձգտում, իշխանություն, որը պետք է դառնար նրանց տնտեսական ու քաղաքական շահերի իրականացման միջոցը: Երիտթուրքերի կուսակցության հիմնադիրներից Թեմոնը քննադատում էր սուլթանին, որովհետեւ նա «թուրք ժողովրդին չէր հրավիրում պատժելու հայերին»:

Նոր վարչակազմի գաղափարախոսները հետապնդում էին մեկ նպատակ՝ թուրքացնել կայսրության տիրապետության ներքո գտնվող բոլոր ժողովուրդներին: Նրանք անվերապահորեն պաշտպանում էին 1894–1895 թվականների հայկական կոտորածները, մերժում կայսրության ժողովուրդների ազատագրական շարժումները:

Երիտթուրքական գործիչ Աղաեւը Փարիզում հայտարարում է, որ Կովկասյան լեռնաշղթայից մինչեւ Պարսից ծոց, Ալթայան լեռներից մինչեւ Միջերկրական ծով ընկած տարածքները պետք է միավորել եւ ստեղծել թուրքական մեկ ամբողջական պետություն: Նրանք սիրում էին կրկնել Համիդյան վարչակարգի մեծ վեզիր Սայիդ փաշայի՝ 1881 թվականին արտահայտած խոսքերը. «Հայական հարցը լուծելու համար պետք է ոչնչացնել հայերին», եւ դա անել ոչ միայն թուրքացման, այլ նաեւ բնաջնջման միջոցով: Նման հայտարարությունների հիմքում ռասայական պանթուրքիզմն էր: «Թուրքիան՝ թուրքերին» կարգախոսի իմաստն այն էր, որ Անատոլիան ու Հայկական լեռնաշխարհը պետք է դառնային թուրքական երկիր, իսկ դրա համար հայերի բնաջնջումն անհրաժեշտություն էր: Գերմանական զորավար Մոնտգոմերին գրում էր, որ հայերի ոչնչացումը որոշել եւ ծրագրել էր Իթթիհատի կենտրոնական կոմիտեն: Հայերի՝ հայրենիք ունենալու ձգտումը հակասում էր երիտթուրքերի ազգայնամոլական ծրագրերին:

Սալոնիկ քաղաքը դառնում է երիտթուրքերի կենտրոնը, որտեղ կայացվում էին կայսրության վաղվա օրվա բոլոր վճիռները: Այստեղ ձեւավորվում է «Թուրքիան՝ միայն թուրքերին» սկզբունքը, վճռվում արեւմտահայերի ճակատագիրը: Այստեղ է որոշվում բոլոր փոքրամասնություններին թուրքացնելու բռնի քաղաքականությունը: Այստեղ երիտթուրքերի համագումարը որոշում է. «Մակեդոնիայի քրիստոնյաները պետք է զինաթափվեն, իսկ մահմեդականները պետք է պահեն իրենց զենքերը.... Պետք է կասկածելիները տեղահանվեն, եւ ոստիկանությանն ու բանակին ազատություն տրվի.... Կովկասից եւ Քրդստանից ներգաղթը պետք է քաջալերել, ներգաղթածներին հող հայթայթել եւ քրիստոնյաների եկամուտներն արգելել.... Պետք է արգելել նոր խմբակցությունների ձեւավորումը եւ նոր ազատագրական գաղափարների տարածումը: Թուրքիան հիմնականում մահմեդական երկիր պետք է դարձնել: Կրոնական ամեն տեսակի քարոզչությունը պետք է ճնշել:

Համագումարը նպատակահարմար գտավ, որ բոլոր կարեւոր պաշտոնները զբաղեցնեն մահմեդական երիտթուրքերը, իսկ քրիստոնյաները կարող են զբաղեցնել միայն երկրորդական պաշտոններ: Մահմեդականությունը պետական կրոն է, եւ հարկ եղած դեպքում պետք է այն պարտադրել նույնիսկ ռազմական ուժով, որպեսզի կայսրությունը մահմեդական նկարագիր ունենա: Կայսրության լեզուն թուրքերենն է: Փոքրամասնությունները, ծայրահեղ դեպքում, իրենց կրոնը կարող են պահպանել, բայց ոչ լեզուն, որովհետեւ թուրքերենի տարածումը հիանալի միջոց է մահմեդական գերիշխանություն հաստատելու եւ ոչ թուրք հավաքականությունները թրքացնելու համար»:

Հետագայում այս բոլորի հիման վրա Քեմալ Աթաթուրքը ձեւակերպում է «թուրքական 10 պատվիրանները»՝ թրքացրու՛ ընտանիքիդ անդամների անունները, խոսի՛ր թուրքերեն, աղոթի՛ր թուրքերեն, երեխաներիդ թուրքական դպրոց ուղարկի՛ր, բարեկամությո՛ւն արա թուրքերի հետ եւ այլն:

Այսպիսով՝ պանթուրքիստական ծրագրերի իրականացումը հանգեցնելու էր հայ ժողովրդի բնաջնջմանը: Թերեւս դա նկատի ունենալով՝ Ջ. Բրայսը Լորդերի պալատում հայտարարում է. «Կոտորածները քրիստոնյա հայերի դեմ մուսուլմանների ատելության պոռթկում չէին: Ամեն ինչ իրականացվում էր՝ համաձայնեցնելով կառավարության հետ եւ հետեւանք էր ոչ թե կրոնական մոլեգնության, այլ քաղաքական նկատառումների: Կառավարությունն ուզում էր ազատվել ոչ մահմեդական ժողովուրդներից, որոնք խանգարում էին կայսրության միատարրությանը....»:

Երիտթուրքերը, կազմակերպելով հայերի զանգվածային կոտորածները, միաժամանակ նպատակ ունեին տիրանալու նրանց ունեցվածքին եւ օգտագործելու այն ինչպես ռազմական ծախսերը, այնպես եւ մահմեդական քաղցած բնակչության կարիքները հոգալու համար:

Երիտթուրքական ծրագրերին մեծապես աջակցում էր Գերմանիան, քանզի եթե երիտթուրքերը ձգտում էին հայերին բնաջնջելով լուծել Հայկական հարցը, ապա Գերմանիայի նպատակն օսմանյան շուկայի միահեծան տերը դառնալն էր: Ըստ գերմանական իմպերիալիզմի գաղափարախոսներից մեկի՝ Ռոհրբախի՝ Թուրքիայում անկարգությունների ծնողը հայերն էին, եւ «հրդեհը կանխելու համար պետք է օգտագործել քրդերին»:

Ֆրանսիական «Լա ռեվյու» թերթը 1916 թ. հոկտեմբերի 26-ին գրում է. «Գերմանիան Փոքր Ասիայում իր ծրագրերը հայերի միջոցով իրականացնել չկարողանալով.... պարզապես վճռեց նրանց դիակների վրայով հասնել իր նպատակներին»: Փաստ է նաեւ, որ Հայոց ցեղասպանության առաջին տարելիցի օրերին կայզերը Թալեաթին պարգեւատրեց «Սեւ արծիվ» շքանշանով:

Ահա այսպիսի լուծում ստացավ Հայկական հարցը Ի դարասկզբին:

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Զորավարի նորահայտ դիմանկարը

Վերջերս Մշակույթի հայկական ֆոնդում պատեհություն ունեցա մասնակցելու «Ծիր Կաթին» գիտամշակութային կենտրոնի ցերեկույթին: Ուշադրությունս գրավեց մեր պանծալի Զորավար Անդրանիկի՝ գրասեղանին դրված շրջանակված նկարը: Փոքրիշատե ծանոթ լինելով Անդրանիկ Օզանյանի լուսանկարներին եւ գեղանկարիչների ստեղծագործական պատկերումներին՝ սույն նկարը, գոնե ինձ համար, պարզապես նորություն էր:

Եվ երբ նկարի դարձերեսին փակցված նամակն ընթերցեցի, պարզվեց, որ այն Բուլղարիայից ֆոնդին է ընծայել մեր հայրենակից Թորգոմ Տյուլկերյանը:

Ահավասիկ նամակի բովանդակությունը՝ մասնակի խմբագրական միջամտությամբ.

«ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՂԵԿԱՎԱՐ, ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՆԿԱՐԻՉ ԱՐԵՎՇԱՏ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Զորավար Անդրանիկի այս նկարը 1919 թվականին պատկերագրել է բուլղարացի գեղանկարիչ Դմիտր Ռադոյկովը (1879–1940 թթ.):

Ձեզ եմ նվիրում յուղաներկ դիմանկարի գունավոր վերատպությունը՝ ի նշան Հայրենիքի եւ Մշակույթի հայկական ֆոնդի հանդեպ իմ մեծ սիրո: Դիմանկարի բնօրինակը (օրիգինալը) ժամանակին ձեռք է բերել Ռուսեի մեր հայրենակից Մկրտիչ Հարությունյանը, որը Անդրանիկ Օզանյանի ձիավոր հարյուրյակի հրամանատար Արամ Թությանի թոռն է: Իմ՝ Թորգոմ Տյուլկերյանի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ, նկարի սեփականատերն այն նվիրեց «Զորավար Անդրանիկի տուն-թանգարան»-ին (Գալաթա, Վառնա):



Զորավար Անդրանիկի այս նկարը նույնպես թող հավերժ հիշատակեցնի ու վառ պահի մեր քաջ հերոսի անմահ հիշատակը եւ ներշնչանքի աղբյուր դառնա ապագա սերունդների համար:

Սիրով՝ Թորգոմ Տյուլկերյան
25.02.2019 թ., Վառնա, Բուլղարիա»:

Փոքրիկ դիտարկում. ինձ ուրախացնում եւ միաժամանակ զարմացնում է այն իրողությունը, որ բուլղար գեղանկարչին հաջողվել է ըմբռնել, անհանգիստ բնավորություն ունեցող Զորավարին համոզել՝ նկարվելու համար ժամերով կեցվածք ընդունել... Հարգանք ու պատիվ թե՛ գեղանկարչին, թե՛ երախտավորներ Մկրտիչ Հարությունյանին եւ Թորգոմ Տյուլկերյանին, քանզի նրանց շնորհիվ հարստացանք հայ ժողովրդի սիրված զավակի եւս մեկ նկարով: Իսկ նկարից արծվենի հայացքով մեզ է նայում ժողովրդական հերոսը, հայրենյաց ու ազգի պաշտպան մեր վաստակաբեռ, քաջահմուտ զորական այրը՝ Անդրանիկ Օզանյանը:

ՍԵՐԺ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Անիրավ տնտեսի առակը

➥ էջ 3

Ներթափանցելով տնտեսի կերպարի մեջ՝ ընթերցողն ակամայից իրեն նմանեցնում է հենց նրան: Երբ տնտեսը որոշում է իր գործողությունների ընթացքը, սկսում է ի հայտ գալ նրա իրական կերպարը: Ընթերցողի՝ տնտեսի հանդեպ համակրանքը, ըստ էության, պայմանավորված է մեծահարուստի նկատմամբ ի սկզբանե ունեցած բացասական վերաբերմունքով: Երբ տնտեսը խոստովանում է, որ ինքը չի կարող հող մշակել եւ ամաչում է մուրալուց, ընթերցողի պատկերացումը նրա մասին կարծես թե փոխվում է (հմմտ. Ղուկ. ԺԶ 3): Գուցե տնտեսի գործողությունները պատկանում են «խաբեության կատակերգություն» ժանրին՝ «Հաջողակ սրիկայի պատմությունը» հնարավոր խորագրով:

Ինչ վերաբերում է տնտեսի՝ հողը մշակելու եւ մուրացկանություն անելու մասին խոսքին, այս մենախոսությունն առիթ է նրա կերպարն առավել խորը քննելու:

Առակի ավարտը կարծես անսպասելի լարվածություն է ստեղծում. փաստորեն տնտեսը վարվել է խելամտորեն, սակայն մեծահարուստ տիրոջ գովասանքը հակասում է լսարանի ակնկալիքին: Մեծահարուստը բացասական կերպար է ընթերցողի համար, եւ դիպաշարի տրամաբանությունը պահանջում է պատիժ, այլ ոչ թե գովասանք: Առակի ավարտն ի դերեւ է հանում սպասվող օրինաչափությունները: Նկատելով տնտեսի հնարամտությունը կամ խոհեմությունը՝ մեծահարուստը հեգնանքով ընդունում է, որ նա վերջապես կատարեց իր աշխատանքը:

Տիրոջ գովասանքն ուղղակիորեն հակասում է պատժի ակնկալիքին: Առակը եզրափակվում է անընկալելի վերջաբանով. ընթերցողը փորձում է հասկանալ առակի իմաստը:

Շարունակելի

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ՄԱՅԻՍ

† Տոն Սուրբ Խաչի երեւման — *մայիսի 7*

† Տոն մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձման — *մայիսի 18*

† Տոն Հոգեգալստյան — *մայիսի 28*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 2.05.2023 թ.
Տպաքանակը՝ 1265